

ՄԵՐԱԿ

Յարեկան գինը 10 բուլլի, կէս տարվանը 6 բուլլ-
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բայց է առաւօտեան 10—2 ժամ
(բայց կիրակի և առաւօտեան 10—2 ժամ)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Իսկա զորոյ Գոնչարով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Համալ Վաղարշապատից. Նամակ Շուշուց. Նա-
մակ Բաղուրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Խոսովութիւնները Ձինաստանում. Ար-
տաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ՅԱՆ. Ջնդոյ օրացում.

ՈՒՌՍ ԳՐՈՂ ԳՕՆՁԱՐՈՎ

Հեռագիրը մեզ լուր բերեց ռուս յայտնի
վրացագրոյ Գոնչարովի մահւոյ մասին:
Հեռագրեցաւ ծնվել 1812 թ.ին Սիմբիւրսկ
քաղաքում, ուրեմն 80 տարեկան էր: Այդ
հասակին ռուս զորքերից շատ քիչներն են
հասնում:

Մենք բոլորս մեր երիտասարդութեան
ժամանակ կրթվեցանք Գոնչարովի վեպերով,
որոնք ներկայացնում էին միշտ առատ նիւթ
քննադատութեան համար և պարունա-
կում էին իրանց մէջ կենդանի հասարակա-
կան տիպեր ռուս կենսելից:

Ով է յիշում հանգուցեալի «ОБЛОМОВ»
վեպը, որը դարձրել էր ընդհանուր գործա-
ծական «ОБЛОМОВЩИНА» անունով դարձա-
վաղը, որը համանշան է հասարակական
ճշմարտեան, անհոգութեան, անարժեք-
ութեան, անփութութեան դադարաւորի:

Հանգուցեալի իւրաքանչիւր վեպը նոր
մտքեր էր յարուցանում հասարակութեան
մէջ տալով վիճարկութիւններ էր ծնեցնում:
Յիշեցեք այստեղ նրա ամենանշանաւոր գը-
րուածքների վերնագիրները. «Обрывъ»,
«Обыкновенная История», «Фрегатъ»
«Палада» և այլն:

Գոնչարովի իւրաքանչիւր վեպը վախճան-
կորոյ թվականներում, ռուս հասարակու-
թեան մտաւոր նոր շարժման ժամանակա-
միջոցում վերին աստիճանի կրթիչ ներգոր-
ծութիւն ունէր ռուս երիտասարդութեան
վրա և առատ նիւթ էր տալիս Բելինսկուն
և Բորիսլիւբովին իրանց քննադատութեան
ներքի համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋՆԴՕՒ ՕԲՍՅՈՒՄ

(Եղևութիւն)

III

Պարզ լուսնի լոյսը մութագոյն քողով ծածկել
էր սարերը: Ուրախ աստղալից երկնքը ծովի
պէս կապտել էր:

Օրայի աշխատանքը վերջացել էր: Մածուցը
մերձ էր, ուրը քաղած, խնոցին հարած: Ոչ-
խարսկն ու գառները բաժանած, նրանց վրա
պահապաններ էին նշանակված:

Մեր վրանի առջև քրդի կարպետներն ու դո-
շակները փռել էին, ու բարձրը դարսել:

Մենք հաղանքս ու խանութներս բազմել է-
ինք բարձրի վրա, իսկ մեր առջև շարվել էր
Ջնդոյ բազմապիսի գերդաստանը:

Մարս ու քեփա հասակաւորներին հրաման
տուին նստելու: Ծեր քրդուհիները միայն համա-
ձայնեցան նստել, իսկ Ջնդոն ու նրա եղբայ-
րը ձեռները խաչած մեր հրամանին էին սպա-
սոււմ:

Այն գիւղումը զից.

Հօյ—Նար, էլէ-բէլէ

Հօյ—Նար քեպիւթարէլէ.

Հօյ—Նար

Նարըմ—Նար.

Ու պարս սկսվեց:

Ձեռ ձեռն տուած տղաներն ու աղջիկները մի
կիսաշրջա կաղնեցին, որը մի մարդու նման տա-
րուբերվում էր հօյ-նարին: Միանուագ տակտով:

Սակայն իր կեանքի վերջին տարիներում
հանգուցեալը այլ ևս չէր գրում և Պետեր-
բուրգում մասնաւոր և կատարելապէս յետ
քաշված կեանք վարելով իջել էր գրական
ասպարիզից:

Որքան նշանաւոր էին Գոնչարովի առա-
ջին վեպերը, որոնցից գլխաւորները մենք
վերև յիշեցինք, այնքան էլ աննշան էին
նրա վերջին գրուածքները, որոնց ռուս հա-
սարակութիւնը գրեթէ չէր էլ արժանաց-
նում իր ուշադրութեան:

Իսկ ամենավերջին տարիներում հանգու-
ցեալը, ինչպէս ասեցինք, այլ ևս ոչինչ չէր
արդիւնաբերում և ապրում էր Պետերբուր-
գում, որտեղ և վախճանվեց:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Սեպտեմբերի 9-ին

Շտապում եմ հաղորդել, որ ձեռնարան մտնելու
համար խնդրեք տուոյններից աւելի չափերը ըն-
դունվեցին, քան ցանկանում էին առաջվայ վար-
չութեան կուսակցիցները:

Այդ խնդրի այդպիսի բարեյայտող ելք ստանալը
ամբողջապէս պէտք է վերագրել կաթողիկոսա-
կան տեղակալ ամենապատիւ Երեմիա եպիսկո-
պոսին, որը շատ ճիշդ կերպով հասկանալով ձե-
մարանի նման հաստատութեան նպատակը, չը
ցանկացաւ ռուսաւարանի դռները փակել ու-
սումնասիրաւ պատանիների առաջ:

Բայց այդ միակ կէտը չէ, որի մէջ ամենապա-
տիւ Երեմիա եպիսկոպոսը ցոյց տուց իր համա-
կրելի դործունէութիւնը: Ելմիւսնի վանքի միա-
բանները և վաղարշապատի բնակիչները նոյն-
բան, եթէ ոչ աւելի, պատճառ ունեն շնորհա-
կալ լինելու այժման տեղակալից, որքան և
ձեռնարան մտած աշակերտների ծնողները: Ահա
ինչու:

Վաղարշապատից ամառները խմելու ջրի մեծ
պակասութիւն են գգում: Գիւղից մի վերստ ու

կէս հեռաւորութեամբ փորած ջրհորներից բերած
ջուրը ամառները ցամաքում է: Այդ ջրհորները
գտնվում են Գասախ գետի մօտ, որի ջուրը
ծծվելով հողի միջով լցվում է ջրհորների մէջ և
յետոյ պարսկական քեւահիւղ սխտեմի ջրանց-
քով հոսում է մինչև Վաղարշապատ գիւղը, այն-
պէս որ, եթէ Գասախ գետի ջուրը պակասի,
կը պակասի և մինչև անգամ բոլորովին կը ցա-
մաքի Ելմիւսնի քանդանի ջուրը, որ պատա-
հում է ամեն ամառ, որովհետև ամառները Գա-
սախի ափերին գտնված գիւղերը այդ գետի
ջուրը կտրում են իրանց հողերը և այգիները
ջրելու համար: Ջրից դուրի մնացած վաղարշա-
պատից խմում են մասամբ գիւղամէջի ջրհոր-
ների աղի ու անառողջ ջուրը, մասամբ էլ ջուր
են վերցնում քանդանից, որի մէջ թողնում են
ամառները Վաղարշապատի առուի ջուրը, որը
բայց անմաքուր լինելուց, ունի և այն անյարմա-
րութիւնը, որ սաստիկ կեղտոտացնում է ջրանց-
քը իր տիղմով: Ամեն աշունք այդ տիղմը մաքրե-
լու համար ծախսվում է մօտ 600 ռ:

Այսպէս էր մինչև այժմ: Իսկ այժմ տեղակալը
նոր ջրանցք է փորել տալիս, որ կը լինի շարու-
նակութիւն ինչ ջրանցքի: Նոր ջրհորները փո-
րում են Գողս գիւղի մօտ, որը Վաղարշապատից
4 վերստաչափ հեռաւորութիւն ունի: Նոր ջրանց-
քը, որը երկու ու կէս վերստ երկարութիւն կու-
նենայ, կը նստի տասից մինչև տասն և հինգ հա-
զար բուլլի և ինչպէս ասում են այնքան ջուր կը
մատակարարի Ելմիւսնին, որքան հարկաւոր է
լինում մի ջրաղաց բանեցնելու համար: Եթէ իս-
կապէս այդ քանակութեան կէսի չափ էլ ջուր
տան նոր ջրհորները, այն ժամանակն էլ վաղար-
շապատից խմելու ջուր բաւականաչափ կունե-
նան և այդ կողմից թիֆլիսցիներից աւելի բախ-
տաւոր կը լինեն:

Ելմիւսնի միաբանները մինչև նոր ջրանցքի
վերջացնելն էլ խմելու լաւ ջրի պակասութիւն
չեն զգում այժմեան տեղակալի օրով, որովհետև
Երեմիա եպիսկոպոսի կարգադրութեամբ ամեն
օր վանքից երկու—երեք ջրի են տանում այս-
տեղից 18 վերստ հեռաւորութեամբ գտնվող Բիւ-

րական գիւղը, որը կաթողիկոսների ամառանոցն
է, և այնտեղի համբեր կոչվող գետակից ջուր
են բերում, որ յետոյ բաժանում են ամբողջ միա-
բանութեանը սկսած սինօդական եպիսկոպոսնե-
րից մինչև վերջին վանականը:

Առաջ էլ համբերել ջուր էին բերում ամեն օր
Ելմիւսնի, բայց միայն վահարանի համար:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Սեպտեմբերի 10-ին

Մեր թեմական դպրանոցում ռուսման այսօր-
վանից սկսվում է: Մի շարքով ուշ սկսվելու
պատճառն այն է, որ ռուսաւարանի շինութիւնը
վերանորոգվում էր: Մինչև այժմ ռուսաւարանի
շինութիւնը նմանվում էր մի աւերակ տան, որով-
հետև այդ շինութեան կառուցանելու օրից,
որ 20 տարի է արդէն, մինչև այս տարի ոչինչ
վերանորոգութիւն չէ եղել, չը նայելով որ դըպ-
րոցի եկամուտը առաջ աւելի է եղել այժմեա-
նից: Երբ մի շինութեան մէջ քսան տարի ոչինչ
վերանորոգութիւն չը լինի, այդ շինութիւնը, ի
հարկէ, կը սկսի աւերվել, քանդվել.... Բայց այժմ
դպրոցի շինութիւնը, շնորհիւ հոգաբարձութեան,
կամ աւելի լաւ է ասել, հոգաբարձուներից մէկի
արած ջանքերին, թէ ներքուստ և թէ արտա-
քուստ բաւական գեղեցիկացել է:

Ի դէպ. թէ մեր թեմական դպրանոցը վեց հո-
գաբարձու ունի, բայց միայն մէկին կարելի է
իսկապէս հոգաբարձու համարել: Այդ մէկի վրա
է դպրոցի բոլոր հոգիները և այդ մէկն է, որ
ջանք է անում դպրոցը իր ընկած դրութիւնից
բարձրացնել, որքան հանգամանքները ներում են.
մնացած հոգաբարձուները անունով են միայն հո-
գաբարձու: Աստուած խէր տայ դրանց....

Նախկին տեսուչը մնում է իր պաշտօնի մէջ:
Ռուսացական խումբը թիֆլիս փոխութեան է
ենթարկվել, բայց այն փոխութեանը չէ են-
թարկվել, որ սպասելի էր. մի քանի ուսուցիչ-
ներ, որոնք, վստահութեամբ կարելի է ասել, բո-
լորովին անյարմար են, մնում են իրանց պաշտո-

Իսկ այս խօրի միջից ամենից յստակ և ամե-
նից զիկ կայծակի նման թափանցում էր գիշերը
Փաթմայի վրդոված ձայնը.

Հօյ—Նար

Սլըմ—Նար:

Յանկարծ երգը կարվեց ու պարը դադարեց:
Խաղ ու պարով յափշտակված, ոչ ոք չէր լը-
սել չներկի կատաղի հաչը: Այժմ այդ հաչը մօ-
տենում էր, մի և նոյն ժամանակ լսվում էր պա-
հապան հովիւների հարայը: Ջնդոն խայթածի նը-
ման տեղից ցատկեց և ձեռը հրացանին տա-
րաւ: Մեր խանութները վրա, կասեա, հող մաղ-
վեց: Հօրաբոյրս լեղածաք եղաւ և ամենքը փա-
խան մտան վրանը:

Ջնդոն իր տղաների հետ, հրացանը ուսին, ա-
ռաջ վազեց և փոքրիկ բլրակի վրա բարձրացած
ձայն տուեց.—Ո՛վ էք:

Ես նայելիս այն ուղղութիւնով և տեսայ մի
քանի ձիաւորներ, որոնք արագ վայր էին իջնում
սուրը Սարգսի սարից, կատաղած շներին մորա-
կելով:

—Այդ ո՞վ է, կրկնեց Ջնդոն:
Չիաւորների միջից մէկը սպիտակ ձիւն մորա-
կեց: Մի յիսուն քայլ հաղիւ բաժանում էր նրան
Ջնդոյից. նա իջաւ ձիուց:

Յետոյ քրդերէն տաք խօսակցութիւն սկսվեց
նրանց մէջ և այդ գուցէ երկար տեւէր, եթէ քե-
ռիս եկողի խօսքը չը կտրէր բարկութիւնով:

—Բարկի լակոտը քանի զլխանի է, գոռաց
նա հայերէն, որ համարձակվում է Գասապար-ա-
ղայի օրային վրա տալ ու նրա չորանի վրա
թուանք բռնել:

—Աւղոն ինչ չուն է, որ իր աղայի վրա աչք

Հօյ—Նար, էլէ-բէլէ.

Հօյ—Նար, աղ-մուշէմա,

Հօյ—Նար, խաղմառուղա:

նում: Յոյս ունենալ, որ գալ տարի դրանք այլ ևս չեն լինի ուսուցչական խմբի մէջ:

Օրիորդաց դպրոցում ևս ուսումն արդէն սկսվել է: Այստեղ ևս ուսուցչական խումբը թեթև փոփոխութեան է ենթարկվել: Ա propos, մենք ապամայ պէտք է մի փաստ հրապարակ հանենք այդ փոփոխութեան առիթով: Այս տարվայ ըսկզբներին դպրոցի հոգաբարձութիւնը մտածում է, թէ ինչպէս անէ, որ դպրոցի աշակերտներին միանգամայն լուսաւորեն: Եւ որովհետեւ, հոգաբարձութեան և ուսուցչական խմբի կարծիքով, «Եւրոպացիները նման լուսաւորվելու» առաջին պայմանը եւրոպական պարեր սովորելն է: Ուստի հոգաբարձութիւնը ուսուցչական խմբի հաւանութեամբ՝ եւրոպական պարերի դասեր է մտցնում դպրոցում: Սովորեցնողն էլ պատրաստ է, առաջ վարժուհին սկսում է աշակերտուհիներին եւրոպական պարեր սովորեցնել: Սովորողներն էլ ամապան մի բուրի են վճարում: Բայց ուսուցչական խմբից մի ուսուցիչ և մի վարժուհի ընդդէմ են լինում պարերի դասեր մտցնելուն, բոլորովին աւելորդ համարելով այդ: Եւ ահա հոգաբարձութիւնը՝ զայրացած այն բանի համար, որ վերջինից ուսուցչին ու վարժուհին «այնպէս չեն պարում, ինչպէս ինքն է ծափ տալիս», ուսումնական տարվայ վերջին արձակուրդ է այդ երկուսին, «անպայման» համարելով դրանց... Կարծում է՝ նրանց տեղ հոգաբարձութիւնը նորերին հրաւիրեց, ուստի: Միջոցի համար թերթերից մեկում յայտարարեց, թէ երկու վարժուհի է հարկաւոր, բայց մի և նոյն ժամանակ արձակվածները դասերը վերցնում է և բաժանում: Մնացածները մէջ, որոնք առանց դրան էլ բաւական դասեր ունենին վերցրած: Այդ նորերը ինչի են պէտք, չէ որ «փորձված ստանան աւելի լաւ է, քան թէ անփորձ հրէշտակը»: Լաւ լուրիկա է, չէ՞:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Երէկ, ամսիս 15-ին, պատրաստից յետոյ հին դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ կաթողիկոսական պատգամաւորների ընտրութիւնը՝ նախագահութեամբ խորհրդաւարական Միքայէլեանցի և մասնակցութեամբ 120—130 ժողովականների:

Ընտրութեան սկզբում առանց որ և է ճշտամարմնութեան առաջարկվեցան քանի մի թեկնածուներ՝ ապա գաղտնի կերպով ընտրվեցան. բայց նախ քան այս արդէն տնօրինված էր այնպէս, որ բոլորեքեան դահլիճ մտնելուց՝ ստորագրում էին մի ընդհանուր թերթի վրա. թերթի խրատքանչիւր ստորագրութեան համաձայն էլ՝ ամեն մի

բարձրացնէ, ասեց Բալուշի տղան, — Աւգոստ աղայի զուռն է, թող աղան Աւգոստի գլուխը կտրի, Աւգոստ ինչ կարող է ասել: Բայց, աղայի ոտներին դուբեան, Բալուշի եկաւ մեր օրան, Աւգոստի գլուխը ջարդեց ու նշանածը փակեցրեց: Թող Բալուշի յետ տայ ինձ իմ Ֆաթմային, ես աղայի ոտը կը համբուրեմ ու նրա չորանին շնորհ չեմ հասցնի: — Աղա, ոտիդ տակի հոդն եմ, որ հրամայես, էս սնաթիս, այս խանջալը փորս կը կոխեմ ու աղային խօսքը չեմ կտրի: Բայց ես Ֆաթմային այս շան ձեռք չեմ տայ, թող կուենք. թէ նա ինձ սպանեց, Ֆաթման նրան հալալ լինի:

— Թող այդպէս լինի, ասեց Աւգոստ: Ջնդոն լուռ էր, հրացանին յենված նա նայում էր հորիզոնին:

— Ի՞նչ կասես Ջնդո, հարցրեց Երեմիս: — Աղայի կամքն է, թող աղան կարգադրէ, պատասխանեց նա:

Բայց յանկարծ նայեց իր սղայի վրա, յետոյ աչքերը դարձրեց դէպի Աւգոստ ու դողդոջուն ձայնով աւելացրեց.

— Սիրտս վատ բան է գուշակում. թող Բալուշի աղջկից յետ տայ, Աւգոստ էլ կը բախլի:

— Քանի որ Բալուշի կնիքանի է, Ֆաթմայի մաղին դիպչող չի լինի, գոռաց կատաղած Բալուշի, ահադին կուպալը (մահակը) բարձրացրեց, «հայդա» կանչեց և արագութեամբ Աւգոստի վրա յարձակվեց:

Այս վերջինն արդէն կուպալը ձեռքին սպասում էր: Լուսնի աղօտ լուսով լուսաւորված, նրանք մի քանի անգամ յարձակվեցան իրար վրա և ահագին կուպալներ իրար գլխի խփեցին: Գետոյ հեռանում էին միմեանցից, վաղում էին իրար ետե-

ւ ժողովական կարգով մօտենում և տալիս էր իր ջուռն՝ անուշը կարգաւորն պէս:

Ամենայն կարգապահութեամբ այսպէս շարունակվելով, ընտրվեցան պ. պ. Աստուածատուր Կաճկաճեանց և Բ. Գօլուխանեանց, առաջինը 85 ձայնով, երկրորդը՝ 41:

Պէտք է ասած, որ ընտրութիւնն աւելի քան աջող է. երկտասարդութեան բանիմաց մասը — որ մեծամասնութիւն էր կազմում, զո՞հ սրտով հեռացաւ դահլիճից՝ հաւատացած լինելով միանգամայն, որ «նորեկները» անկասկած պիտի արդարացնեն իրանց վրա դրած յոյսը...

Ամսիս 1-ից արդէն տեղին ուսումնարանները թէ պետական, թէ քաղաքային և թէ մասնաւոր — սկսել են կանոնաւոր ուսուցիչ. միայն հայոց ծխական-եկեղեցական երկսեռ ուսումնարաններն են, որ փայլուն բացառութիւն են կազմում... Բազում «Մարաշիւրական ընկերութեան» հովանաւորութիւնը վայելելով այդ դպրոցները, որ շատ կէտերում բացառութիւն պիտի կազմեն և միանգամայն ազատ լինեն հայ դպրոցներին յատուկ խոչընդոտներից ու անկանոնութիւններից — տարադրաբար դատաւարութեամբ են աւելի քան սոսկալի խոչընդոտի՝ «անմեղ անտարբերութեան»... անտարբերութիւն՝ վարչութեան կողմից, անտարբերութիւն՝ հասարակութեան կողմից: Այսօր սեպտեմբերի 16-ն է, սակայն ոչ միայն ուսումը դեռ չէ սկսված, այլ օրիորդաց ուսումնարանին ուսուցչական խումբը չէ կազմակերպված, նստարանները չեն ներկայւած, դասատուները չեն պատրաստված: Մտադիր են սկսելու եկող երկուշաբթի, ամսիս 23-ին, այն էլ եթէ ներկերը չորացած լինեն...

Թէ ինչու հարկաւոր սաների ու սանուհիների վիճակը դատաւարութիւն է դանազան ներկերի ու «կարկառանքների» չնչին հաշիւների, այդ մի խորհրդաւոր խնդիր է, որը գոհացուցիչ կերպով լուծել կարող է միմիայն ուսումնարանների տեսչական վարչութիւնը: Հասարակութիւնը ոչինչ տեղեկութիւն չունի. ոչ միայն հանգամանքներին ծանօթ չէ, այլ և մտքովն անգամ չէ անցկացնում ծանօթանալու, հետաքրքրվելու, իմանալու՝ թէ ինչ կայ, ինչ չը կայ: Հայ հասարակութեան համար — աւելի պարզ խոստովանած — համարեա թէ գոյութիւն չունեն ծխական-եկեղեցական դպրոցները, ոչ մի բան չէ կապում նրանց, ոչինչ միջոցներ չեն գործադրում նրանց մօտեցնելու, միմեանց հետ ծանօթացնելու. չինական պատով բաժանված է ընտանիքը ուսումնարանից, ոչ ուսումնարանը գիտէ, թէ որտեղից է ընդունում աշակերտներ և ոչ ընտանիքը գիտէ՝ թէ ուր է ուղարկում իր հարազատին, սակայն շարունակում են...

Շարաթ, ամսիս 14-ին, պատշաճաւոր կերպով

ւից ու կրկին իրար վրա հասնում ու կրկին լուսնում էր իրար դիպչող կուպալների թրակոցը: Այս բոլորը մի անխնայութեամբ կատարվեց, այնպէս որ ոչ ոք չէր էլ մտածում արգելել այս դարձուկները միմեանցից: Երբ Ջնդոն և միւսները սթափվեցան ու վաղեցին դէպի կուռքները, Բալուշի արդէն վայր էր ընկել...

Ես վախեցայ, ուզում էի փախչել այդ սոսկալի տեսարանից, բայց սիրտս բաբախում էր, իսկ ոտներս դողում էին:

Մի աննկարագրելի աղմուկ բարձրացաւ: Բալուշի մայրը «վայ բալա» գոռաց և ուշաքալով ընկաւ գետնի վրա, միւս կանայք վայնասունը հեցեցին, հրացանի ձայնը լսվեցան, շները ոռնոց, տղամարդկանց հայոյանքներ...

Մի անձ միայն անվերջ նայում էր այս իրարանցումին: Նա իմ կողքին էր կանգնած. լուսնին ընկել էր ուղիղ երեսին. նրա անտարբերութիւնը դարձաւ ինձ: Ֆաթման արձան էր կտրել... Կարծես այս սարսափելի անցքը նրան չէր հետաքրքրում...

Նա խլկել էր աշխարհից: Բալուշի ձեռքերի վրա տանում էին օրան: Ես ոյծերս հաւաքեցի և վաղեցի նրանց ետեից:

Երբ ես ներս մտայ, վրանը լի էր: Կանանց լացի ձայնը լցրել էր օդը...

Բալուշի ուշաքալով պառկեցած էր մի անկիւնում. նրա երեսն ու կուռքը ներկված էին արիւնով, որը իր փոխանցել էր գլխին կապած թաշկինակի և թրջում էր բարձր:

Ջնդոն չոքել էր իր որդու գլխաւորը, աղա՛մարդիկ լուռ շարված էին վրանի մուտքի առջև, կանայքը կապոյտ շոր էին խանձում, որ ձէլի

տեղի ունեցաւ պ. Պրեզիդենտի նախաձեռնութեամբ բացվող՝ զինադիակաւ 6 դասարանական կուռքով ուսումնարանի բացումը: Տրված տեղեկութիւններից, ինչպէս երեւցաւ, ուսումնարանը այս տարի կունենայ միայն պատրաստականներ և առաջին դասատու: Առ այժմ ունի 110 աշակերտներ, թէ և ընդունելութիւնը դեռ շարունակվում է: Աշակերտներից 85 հոգի հայեր են, միւսները՝ ռուս, վրացի, թուրք, հրէայ և գերմանացի: Առաջին դասատու աշակերտների համար թօշակաւորում է որոշել տարեկան 100 ռ., իսկ պատրաստականների համար ութնունական ռուբլի: Ուսումնարանի ծախսը հասնում է 14,000 ռուբլու, իսկ մուտքը՝ 11,000 ռուբլու. պակասորդը լրացնելու համար՝ մտադիր է պահելու գիշերօթիկներ ևս:

Գոյութիւն ունեցող 5 մասնաւոր դպրոցների մէջ առաջինն է թէ աշակերտների քանակութեամբ և թէ դասատուների ցնեղով. բոլորն էլ բարձրագոյն կրթութիւն ստացած ուսուցիչներ են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թիւեցնում ենք ԹԻՖԼԻՍԻ հայ հասարակութեանը որ այսօր, հինգշաբթի օր, Թիֆլիսի հայոց թատրոնական խումբը ներկայացնելու է Գիւմայի «Կամիլադար» տիկին» պիէսան: Ներկայացմանը, զլիսաւոր դերերում, մասնակցելու են՝ տիկին Սիբանուշ և պ. Աբելեան:

Բաթումի մեր թղթակիցը գրում է մեզ հետեւեալը. «ԿԱՅԿԱՅ» լրագիրը իր վերջին համարներին մէկում յայտնել էր, որ Բաթումի լողարանում խեղդվել է մի ուսանող: Թիւեցնում ենք, որ խեղդվել է ոչ թէ լողարանում, այլ բաց ծովի մէջ և որովհետեւ այս տարվայ ընթացքում, այդ տեղում խեղդողների մէջ այդ արդէն չորրորդը զոհն է, ուստի թող ենք տալիս մեզ մի փոքրիկ նկատողութիւն անել: Քաղաքը ունի երկու լողարաններ, որոնց ամեն տարի տալիս է կապալու: Որքան էլ քաղաքային լողարանները ոչ մի դանաղանութիւն չունենային իրանց բացօթեայ դիրքով կողքի անվտանգ լողացողների տեղից, այնու աւանդային այդ լողարաններում կան գոնէ երկու թոկեր, որոնցից լողալ չիմացողները կարող են օգտվել: Քաղաքը կամ պէտք է բոլորովին թոյլ չը տար ժողովրդին լողանալու լողարանի մօտերը, ուր ամբողջ խորութիւնները այնքան էլ յուսալի չեն և կամ եթէ նրա սիրտը ցաւում է ժողովրդի համար, չուզենալով նրան զրկել ձրի լողանալուց, գոնէ մի աղատաբար նաւակ պիտի պահէր այդ տեղերում ամառվայ ամիսներ ըն-

մէջ թափախեն ու գլխին կապեն արիւնը կտրելու համար: Գետին ջուր ուղեց, Բալուշի երեսը լուաց, կուռքին սրկեց, բայց նա ուշքի չէր գալիս:

Գետոյ մի սղիտակ շոր քաշեցին երեսին. Բալուշի մեռել էր:

Մի սոսկալի լուսնի տիկն է ամենին: Բոլորը կարծես բարացել էին, չուարած իրար երեսին էին նայում, կարծես, իրարից այս դարձուկի դէպքի բացատրութիւնն էին խնդրում, յետոյ դուրսն էր կը գցում: Ջնդոն դեռ չոքած էր. նրա կիւնը ու շագնաց ընկել էր խեղճ Բալուշի կողքին...

Գանկարծ Ֆաթման ներս մտաւ: Աչքերը ապուշի նման առաջ դրած, առանց իր շուրջը նայելու, նա լուսնոտի պէս, անցաւ վրանի անկիւնը ու չոքեց մօրս առաջ՝ ու նրա փէշերը համբուրեց: Մօրիցս անցաւ նա հօրաբնօն, յետոյ քեռու, իսկ ամենից յետոյ իր սկեսուրին: Ամենքի առջև չոքում էր նա, փէշերն ու ոտները համբուրելով: Ես չուարած նայում էի այս ուրաւակներին: Նրա դանդաղ շարժումները ու անվերջ դիմքը դարձանում էին ինձ: Նրա գծադրութիւնները չէին փոխվել, ոչ վիշտ, ոչ ցնծութիւն և ոչ ատելութիւն կարելի էր կարգաւ այս անշարժ երեսի վրա: Իր սկեսուրի ոտները համբուրելուց յետոյ նա շուռ եկաւ դէպի Ջնդոն և յամա խնդալարի նման, որին ոչինչ չէ կարող յետ կանգնեցնել իր դիտաւորութիւնից, նա սողաց ծնկներով վրա մինչև իր սկեսուրից, և ընկաւ նրա ոտները: Ջնդոն ոչինչ չէր զգում, գոռածի նման, նա շարունակում էր նայել իր որդու դիակին:

Այժմ Ֆաթման ոտի էր կանգնել ու առանց չտապալու մէկ մէկ ետ անում իր դուռները

թացում, քանի որ դա այնքան էլ մի մեծ ծախս չէ պահանջի, և կամ մի քանի տեղից թոկեր պիտի ձգէր. եթէ ոչ այդպիսի խեղդողներ ոչ առաջինները և ոչ էլ վերջինները կը լինեն:

Լուսն ենք, որ Բաթումում նորերս բարակացաւից վախճանված թիֆլիսեցի վաճառական պ. Բախլի Եղիազարեան կտակել է 2000 ռ. Ներսէսեան դպրոցին, 2000 ռ. Էլմիաճնի ճեմարանին, 500 ռ. Հայոց Բարեգործական ընկերութեանը, 500 ռ. Հայունհայ Բարեգործական ընկերութեանը, 500 ռ. Թիֆլիսի ս. Կարապետ եկեղեցուն, որի ծով էր հանգուցեալը: Բացի դրանից, հանգուցեալի ժառանգները դիտաւորութիւն ունեն յանձն առնել ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի ծախսերը:

ԳՕԻՍՍԻՑ մեզ գրում են. «Մեզ մօտ այլ և ալ յանցանքներ սովորական բան են դարձել: Նորերում մի երկտասարդ, որին իր սիրած աղջկայ ծնողները մերժում են իրանց աղջկից յիշեալ երկտասարդի հետ ամուսնացնելու, իր վրէժը նրանով է հանում, որ յափշտակում և բռնաբարում է խեղճ աղջկան: Աղջկից 12—14 տարեկան է լինում»:

Քանի մի օր ԹԻՖԼԻՍԻՍԻ մնալուց յետոյ, դէպի Պարսկաստան ուղևորվեցան Վիեննայի պարսից դեսպան Նարիման-խան, Պարսկաստանի մարտաւարները զլիսաւոր Գիթաբ-խան և երկտասարդ վահրամ-բէյ Գաղեան:

Պետերբուրգի լրագիրներում կարդում ենք, որ թիւրքաց ֆինանսները միմիայն, Գալուշ-Ֆաշա, ձիուց վայր ընկնելով սաստիկ ջարդեց գլուխը և մի քանի ժամից յետոյ հոգին աւանդեց:

Մեզ գրում են ԱԼԷԿՍԱՆԴՐՕՊՈԼԻՑ իբր թէ մեր երկու երկտասարդ երգիչներ՝ Բարիսոն Եղիազարեան և Կենոբ Աֆրիկեան, Թիֆլիսում և Բազումի մէջ իրանց կոնցերտներն աւարտելուց յետոյ, մտադիր են գալ Ալեքսանդրապոլ և Երևան, այդ երկու քաղաքներում էլ կոնցերտներ տալու համար: Թղթակիցը գրում է որ Ալեքսանդրապոլ հասարակութիւնը անհամբեր սպասում է տաղանդաւոր երգիչների գալուտեան:

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում շարունակվում են ուսաց դրամատիական ներկայացումները. խումբը վատ չէ, սակայն թատրոնի դահլիճը միշտ դատարկ է լինում: Այդ ինչ է նախալուծ Ջարմանալի է, որ թատրոն յաճախող փոքրաթիւ հասարակութիւնը դարձեալ մեծ մասամբ հայերից է բաղկացած, իսկ Թիֆլիսի բոսն

ու իր նշանածի ոտի տակ դնում. ծանրաբաշ արծաթեայ վիզուցը, վիզի կախած մարջանի շարքերը, խոշոր դիւբրեյ շարած ապարանջանը: Գետոյ հանեց զմեզ թաճակ չինած ականջի օղերը, կամաց ետ արեց նաւուք մէջը սեղմող լայն արծաթե քամարը և կուրծքը սաղաւարտի նման ծածկող քրոնոս դարդերը: Գետոյ, առանց վարանելու, նա ձեռք գցեց իր անթարու օճիկը, կոճակները մէկ-մէկ ետ արեց, սղիտակ, ջահիլ կուրծքը բացեց: Մի բան հանեց նա անթարու տակից ու երկ անգամ համբուրելուց յետոյ, նա մի քանի կտրեց վիզից կապող թիւը և դրեց Բազումի կրքին: Դա մի պղնձե լաշ էր: Ջնդոն ընտանիքը բոլոր անդամները կաշի էին կախում իրանց վիզից: Այս բոլորը խառնարկուց յետոյ, Ֆաթման կուռքու, Բալուշի ոտի տակի քէշան համբուրեց և նոյնպէս անվերջ, ուրուականի պէս, դուրս գնաց:

Եւ ոչ ոք չը մտածեց կանգնեցնել նրան: Ինձ պատմեցին, որ նոյն լուսնոտի նման, նոյն անվերջ դիմքով, նա նստել էր Աւգոյի թաղը և առանց դէպի Ջնդոն վրանը յետ նայելու, անհետացել էր ձորերի խորքերում...

Նոյն գիշեր Բալուշի 17 տարեկան եղբայրը, դրահաւորված, իր ծնողներին ձեռքերը համբուրեց, ձի նստեց ու ընկաւ սարերը իր եղբոր վրէժն առնելու...

Մի ամիս չէր անցել: Օրայից լուր եկաւ, որ Աւգոյն սպանված գտել են սարերում:

Մի քիչ յետոյ Ջնդոն մի դարձուկի մահով մեռաւ. գալիքը նրան կրեւ էլին:

Իսկ Ֆաթման: Նա ամուսնացել էր մեր նոր հովուի հետ... 1 յուլիսի, 1891.

առաջ հասարակութիւնը կատարելապէս բացակայ է լինում թատրոնի դահլիճից:

Կարող ենք յայտնել հայ հասարակութեան, որ թատրոնին հայերէն լեզուով թարգմանված լատարմէն մէջը ծախվում է այժմ Թիֆլիսի Վոլոգոզայա փողոցի վրա գտնվող Տէր-Սարգսյանի թղթի մագաղանում: Հասցէն. Тифли, магазин канцелярск. принадлежностей, Саркисяна, Дворцовая улица.

Մեր ընթերցողներին և ուսուցչուհիներին յիշեցնում ենք, որ հայ ուսուցչուհիներ պատրաստուելու համար հիմնված կուրսերում այս օրերս կրկին սկսել են դաստիարակութիւնները:

Այս տարի «Մշակի» բաժանորդներին թիւը հետզհետէ սկսեց աւելանալ: Այս տարվայ չափ բաժանորդներ «Մշակի» գոյութեան ամբողջ ընթացքում դեռևս ոչ մի տարի չենք ունեցել: Անկախ աւելանում է և յայտարարութիւններին թիւը: Դա մեզ յոյս է տալիս, որ 1892 թւին մեր լրագիրն աւելի լաւ կերթայ և աւելի էլ կը դրախտ հայոց հասարակութեան համակրութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Գրութիւնը Չինաստանում օրից օր վատանում է: Կայսերական հրովարտակը հրամայում է խիստ միջոցներ գործադրել խռովարարների դէմ, սակայն այդ հրովարտակը, ինչպէս երևում է օչինյա ներգործութիւն չէ ունեցել մինչև այժմ: Չինացիք խորհակում են յարձակվել քրիստոնեայ միսիոնարներին դէմ, նրանց կոտորել և նրանց ընտանեկաններն այրել: Ընդհանուր կատաղութիւն և առեւտրութիւն տիրում է չինական ամբողջ մէջ ոչ թէ միայն միսիոնարներին դէմ, բայց և ամեն մի քրիստոնեայի, ամեն մի եւրօպացու դէմ:

Դեռ խանութ նահանգում տիրում է համեմատաբար ապահով դրութիւն, որովհետև եւրօպական նաւատորմերի թնդանօթները կարողանում են պաշտպանել այդտեղ դեռեղված եւրօպացիներին շահերը, իսկ Չինաստանի ներքին զաւառներում ապրող եւրօպացիներին վիճակը շատ անմիջական է:

Չինացի մահ դարին ենք պրօկլամացիաներ ներհասարակել, որոնց մէջ բացատրում են ամբողջին, որ եւրօպացիներին, յատկապէս միսիոնարների ներկայութիւնը Չինաստանում սպառնում է երկրի ներքին խաղաղութեանը և համարձակ կիպով հրաւիրում են չինացիներին ապստամբվել եւրօպացիներին դէմ և արտաքին նրանց կայսրութիւնից:

Պարզ է որ եւրօպական պետութիւնները, ինչպէս էլ չէ համակրելին միսիոնարներին գործունակութիւնը, չեն կարող համբերել որ իրանց հպատակները անողորմ կերպով կոտորեն Չինաստանում, կամ ժողովրդի մոլեռանդութեան չնորոգ ուղղակի աքսորվեն ամբողջ երկրից: Եւրօպան պարտաւոր է համ իր հպատակներին կենտրոն ու պատիւ պաշտպանել, համ էլ Չինաստանին ստիպել իր ստորագրած դաշնագիրները յարգելու:

Վերջին հեռագիրները մեզ տեղեկացրին, որ Հիւսիսային-Ամերիկայի հանրապետութեան, Ամերիկայի, Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ համաձայնութիւն կայացաւ այն մտքով, որ եթէ Չինաստանը չի կատարի եւրօպացիներին պահանջները, այդ չորս պետութիւնները միաբանօրէն կը դրոճեն նրա դէմ: Եթէ կը շարունակվին անկարգութիւններ ու բռնութիւններ Չինաստանում, այն ժամանակ վերոյիշեալ պետութիւնները կուղարկեն իրենց Չինաստան իրանց պատերազմական նաւեր, որոնք և կը պաշտպանեն եւրօպացի հպատակներին, հիւպատոսներին և եւրօպական շահերը արեւելեան կայսրութեան մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզից հեռագրում են սեպտեմբերի 7-ին, որ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարէս Բլանքում կազմած բանկէտի ժամանակ մի ճառ արտասանեց, որով մասնացոյց էր անում Ֆրանսիայի ներքին և արտաքին աջողութիւնների վրա: Այդ ճառը հիմնաւոր տպաւորութիւն է թողել:

Պարիզի Օպերա թատրոնում վաղէրի չ'օչնդրին: օպերայի ներկայացման առթիւ ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Պարիզում անկարգութիւններ պատահեցան, որոնց ժամանակ աչքի էին ընկնում մանաւանդ բուլանժանները: Այժմ «Figaro» լրագրում հռչակաւոր երաժիշտ Գուեո, «Musette» օպերայի հեղինակը, բողոքում է բուլանժանների այդ ցոյցի դէմ: Վերոյիշեալ ցոյցերը անմիտ անուանելով, Գուեո յայտնեց, որ վաղէրի վրա պէտք է նայել որպէս հանճարեղ երաժիշտի վրա:

«Neues Wiener Tageblatt» լրագիրը հաղորդում է, որ պատերազմական միջոցները պահանջում է քսան միլիոն դոլլէրի չափով մեծացնել ղեկավարական ընդգծելով, բայց Ֆրանսիաների միջոցները հակառակ է այդ մտքին:

«Times» լրագիրն Շանխայից հեռագրում են, որ տեղական մաքսատունը կալաւորեց ղեկերին մեծ քանակութիւն, որը ուղարկված էր Չինացի-կառնաւորներ զաղտնի ընկերութեանը: Այդ գործում խառն են բազմաթիւ օտարականներ:

«Times» լրագիրն խոսքերով, չինացիները քանդել են եւրօպացիներին բոլոր տները, բացի անգլիական հիւպատոսարանից և մաքսատնից: Մեծ դժուարութեամբ միայն աջողվեց պաշտպանել ֆրանսիական միանձնուհիներին կատարած ամբոխից:

Վիէնայի և Լոնդոնի խաղական դեսպանները այժմ Լոնդոնում են և ամեն օր խորհրդակցում են խաղական առաջին միջոցներ մարկիզ դէ-Բուրգինիի հետ: Առում են, որ վերոյիշեալ խորհրդակցութիւնների առարկան արեւելեան գործերն են: Արեւելեան գործերում խաղական և անգլիական քաղաքականութիւնը նման ուղղութիւն է ունենալու:

Գերմանական կանցլէր Ֆոն-Կապրիվի, Միւնխենի եղած ժամանակ, տեսակցութիւն ունի պապի դեսպան արքեպիսկոպոս Ալեքսանդրի հետ: Գերմանական կաթոլիկ միսիոնարները Չինաստանում Գերմանիայի հովանաւորութեան տակ առնելու վերաբերմամբ: Մինչև այժմ, որպէս յայտնի է, բոլոր կաթոլիկ միսիոնարները Ֆրանսիայի հովանաւորութեան տակ էին գտնվում:

Կ. Պոլսից հեռագրում են, որ ապստամբները Եմէնում մեծ առաջադիմութիւններ են անում: Կ. Պոլսում ստացված տեղեկութիւնների հիման վրա, նրանք դրաւել են Սանա:

Լոնդոն XIII պապը անհրաժեշտ համարեց յիշեցնել հռոմայադարեան կաթոլիկներին, որ միանմարտողները բանադրանքի են ենթարկվում: Հռոմից, սեպտեմբերի 5-ից հաղորդում են, որ շուտով լոյս կը տեսնի պապի մի նոր շրջաբերականը միանմարտի դէմ:

Կ. Պոլսից հեռագրում են սեպտեմբերի 10-ից (22-ից) հետեւալը. «Եմէնի կառավարիչը փախաւ: Ապստամբութիւնը աւելի և աւելի է զարգանում. ապստամբների թիւը մեծանում է:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական դրամաճառական շրջանում մի հետաքրքիր յօդուհան է կատարվելու: Լէյպցիգի յայտնի Բրոկհաուզ հրատարակչական ֆիրման տօնելու է Բրոկհաուզի էնցիկլոպեդիական հռչակաւոր բառարանի հարկւրամեայ յօդուհանը: Ի միջի այլոց, վերոյիշեալ ֆիրման ձեռք է դրել բառարանի յօդուհանական 14-դ հրատարակութեանը:

Ստամբուլիական վերջին տեղեկութիւններըց երևում է, որ գերաբուռնաւոր պարագայ կանանց թիւը Պարիզում հասնում է 1800-ի: Այդ թիւից Պարիզի գերաբուռնական վերջին ցուցահանդիսում մասնակցում էին, որպէս էկզպոնէնտներ, 484 կանայք, որոնք ստացան մօտաւորապէս 300 պարգևներ:

Գերմանական մամուլը սեպտեմբերի 14-ին տօնեց Ֆրանց Բօպի միջոցաւ հարկւրամեայը: Որպէս յայտնի է, Բօպը համեմատական ընդունակութեան հիմնադիրն է և հնդկա-եւրօպական լեզուների համեմատական քերականութեան ըստեղծողն է:

Մեղիկական համայնքների ժողովի անդամներից շատերը պարամէնտական մօտակալ նստաշրջանի բացման ժամանակ վճռել են առաջարկել, որ տիկնիւններն չ'ընդունեն ներկայ լինելու պարլամենտի նիստերին, որովհետև նրանք շատ են աղմուկ հանում:

Ամբողջ երկրագնդի վրա 1885 թւին էլէկ-

տրական միայն երեք երկաթուղիներ կային 13 վագոններով, իսկ այժմ Ամերիկայում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Աւստրալիայում և Եպոսիտիայում կան մօտ 325 էլէկտրական երկաթուղիներ 4000 վագոններով: Տարվայ ընթացքում նրանք տանում և բերում են 750 միլիոն ճանապարհորդներ:

Պարսից ընդհանուր հիւպատոսարանը Համբուրգում գիւնց «Hamburger Correspondent» լրագրի խմբագրութեանը, ինքնուրուի տպագրել հետեւեալ նկատողութիւնը: «Ի նկատի առնելով մամուլի մէջ երեսցող յօդուհանները Պարսկաստանի մասին, որոնք ուղարկվում են գերմանական լրագիրներին, ըստ երևոյթին, Անգլիայից, այստեղի պարսից կայսերական ընդհանուր հիւպատոսարանը լրագրութիւն է ստացել հերքելու վերոյիշեալ չարամիտ դիտաւորութեամբ տարածված տեղեկութիւնները: Իսկապէս պարսից տեղեկութեան մէջ յեղափոխական որ և է շարժում չէ եղել պետութեան գլխի դէմ: Ժողովուրդը ջերմ կերպով սիրում է այժմեան իր միապետին, և համարում է նրան հողատար և ուղարկած թաղաւոր, որը նպատակ է դրել իրան նպատակ իր մեծ պետութեան և ժողովրդի բարօրութեանը: Իրաքանչիւր մարդ, որին պատահել է վերջին տարեւորների ընթացքում ճանապարհորդել Պարսկաստանում, անպատճառ պէտք է զարմանայ պարսկական մեծ թաղաւորի իմաստուն վերանորոգութիւնները տեսնելով: Եւրօպայում արած Շահի ճանապարհորդութիւնները անպատշաճ չ'ընկալելով Պարսկաստանի համար: Այժմ արդէն նկատելի է բարեբար առաջադիմութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում, հաղորդակցութեան ճանապարհներին և դանադան հասարակական հիմնարկութիւններին մէջ. նոյնպէս կարգի են բերված պետական ֆինանսները: Դանշայից յետոյ անմիջապէս յիշատակութեան արժանի է նրա մեծ-վիճիկ Էմին-Սոլթանը, որը իր պետական մեծ տաղանդի շնորհիւ, Պարսկաստանին մեծ ծառայութիւններ մատուց: Պարսկաստանը մանաւանդ շատ օգուտ քաղեց եւրօպական պետութիւններում գոյութիւն ունեցող դուրքի կաղանկերով: Ժամանակակից տեխնիկայի, իր-դիւնորոված ոյժերը զօրեղացնելու և իր զօրքը կրթելու համար: Մի պետութիւն, որը կը մտածէ յարձակվել Պարսկաստանի վրա, սպառնալի հակապարկերից կը հանդիպէ: Ամեն մարդու վրա մանաւանդ մեծ տպաւորութիւն են գործում հնձեղագոր գնդերը, որոնց մասամբ կարելի է համեմատել ռուսաց կազակների հետ: Ի նկատի առնելով պետական այդ ընդարձակ ձեռնարկութիւնների աջողութիւնը և այն հանդամանքը, որ այդ ձեռնարկութիւնների համար Պարսկաստանը ստիպված չէ եղել դիմել ներքին կամ արտաքին փոխառութեանը, պէտք է խոստովանենք կառավարութեան գլուխ կանցնած միջոցներին իմաստութիւնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մի այնպիսի ընդարձակ երկրի, որպէս Պարսկաստանն է, որը ընական հարստութիւններ և զօրութեան անսպասելի աղբիւրներ ունի, չէ կարող մեռնող պետութիւնների թւում դասվել:»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 16 սեպտեմբերի: Երէկ երկու-յիստ Մեծ Խլխանուհի Ալէքսանդրա Գեօրգիւնիւնայի մարմինը տեղափոխվեց Մոսկվա, ուր գիմաւորեցին կօստանալին և Գիմիտրի կօստանալին: Վիւն Մեծ Խլխանուհի, կայսերական Պալատի միջոցով և ուրիշ աստիճանաւորները: Միտրօպօլիտը մաղթանք կատարելուց յետոյ, դադարը բարձրացրին յունաց թաղաւորը և Մեծ Խլխանուհի և տարան կայսրանին մօտ գտնվող ս. Բարսեղ Կիսարացու եկեղեցին: Այսօր առաւօտեան մարմինը կուղարկվել Պետերբուրգ, ուր կը հասնի վաղ առաւօտեան: Թաղում կը կատարվի Պետրօպօլիսի մայր եկեղեցում չորեքշաբթի, սեպտեմբերի 18-ին:—Ալախանվեցան՝ պետական խորհրդի անդամ Վաղիմիր Պալլադին Տիտով և յայտնի գրող Խլխան Ալէքսանդրովիչ Գօնչարով:—Ընթացիկ տարվայ առաջին կիսամեակին պետական եկամուտները եղել են 423 միլիոն ռուբլի, իսկ ծախսվել է 406 միլիոն ռուբլի:—«Гражданин» լրագիրը լսել է, որ մտադրութիւն կայ աստղաբաշխական նոր ինստիտուտ կառուցանել, որի նախագիծը մշակում է անուղղակի հարկերի բաժանմունքը:

Սեպտեմբերի 16 սեպտեմբերի: Շաբաթ օր բալակլավան ս. Գեօրգի վանքը, տավրիկեան եպիսկոպոսի մասնակցութեամբ, հանդիսաւոր կերպով տօնեց իր գոյութեան հազարամեակը: Եկեղեցու շրջանում ոչխարների արտահանութիւն է սկսվել դէպի Պարսկ:

ՊՍԻՒՅԸ, 16 սեպտեմբերի: Երէկ արտաքին գործերի միջոցաւ Ռբո ճառ արտասանեց Բապօմուս, զինեղալ Ֆելէրը արձանի բացման ժամանակ: Խօսելով ֆրանսիական նաւատորմի Եւրօպային արած այցելութիւնների մասին, Ռբո առանձ-

նապէս մատնացոյց արաւ Ռուսաց Կայսրի և ժողովրդի կողմից ցոյց տուած համակրութեան վրա: Այդ խօսքերից յետոյ լսեցան «Կեցցէ Ռուսաց Թագաւորը, Կեցցէ Ռուսաստանը»:

ՍԵՊՏԵՄԵՐԻ, 16 սեպտեմբերի: Այսօր, Վոլգա գետի վրա, Վիպրօվիս գիւղի մօտ կատարված մաղթանքից յետոյ, սկսվեց երկաթուղու կազանեան բաժնի կառուցումը:

ՄՕՍԿՎԱ, 17 սեպտեմբերի: Այսօր առաւօտեան, սեպտեմբերի 16-ին, հանդիսաւոր կերպով տարան Մեծ Խլխանուհի Ալէքսանդրա Գեօրգիւնիւնայի մարմինը Նիկօլաեվսկայա կայարանը: Իսկ առաւօտեան և եթ եկաւ դնացքը Նոյա Կայսերական Մեծութիւնների հետ միասին: Հոգեհանգստից յետոյ, Նոյա Մեծութիւնները և Նոյա Բարձրութիւնները ճանապարհ ընկան Պետերբուրգ: Գնացքին միացրած է մի սգազգեստ վագոն, ուր գրված է Մեծ Խլխանուհի Ալէքսանդրա Գեօրգիւնիւնայի մարմինը:

ՍԱՐԱՅՈՎ, 17 սեպտեմբերի: Երէկ, նահանգապետի հրաւիրմամբ, նրա ընտանեկանում հաւաքվեցան Սարաւոյի վաճառականների մէջ իրանց հարստութեամբ յայտնի անձինք: Նահանգապետը, ճառ խօսելով, ստորագրութիւն բացեց յօդուտ նահանգի սահմաններում եղած սովատանջների և ամենից առաջ ինքն ստորագրեց 1000 ռուբլի: Այդպիսի առատաձեւեւ սկզբնաւորութիւնից յետոյ, ստորագրութիւնը տուեց 30.000 ռուբլի: Մի և նոյն ժամանակ քաղաքագլուխը նուիրեց 1000 ռուբլի, և մի քանի անձինք նուիրեցին 3000-ական ռուբլի:

ԲԵՐԼԻՆ, 17 սեպտեմբերի: Օսմաբերկում խօսելով տեղական քաղաքագլխի հետ, կայսերական կանցլէրն այն միտքը յայտնեց, որ գործերի այժմեան դրութեան մասին եղած երկիւղեկը անհիմն են: «Կառավարիչներից ոչ մէկը, —ասեց կանցլէրը,—ցանկութիւն չունի խախտել խաղաղութիւնը և եւրօպական պատերազմ առաջացնել: Վերջին ժամանակ մի քանի պետութիւնների մէջ կայացած մօտաւորութիւնը նոյնպէս երկիւղեկի առթիւ չէ տալիս և առաջից եղած յարաբերութիւնների արտայայտութիւն է միայն: Որքան ես կարող եմ դատել, եւրօպական կառավարութիւններից ոչ մէկը չէ ցանկանում պատերազմ, որը իր տանջանքներով և այլ հետեւանքներով նախկին բոլոր պատերազմներից սարսափելի կը լինի:»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 սեպտեմբերի: Այսօր առաւօտեան, ի Տէր հանգուցեալ Մեծ Խլխանուհի Ալէքսանդրա Գեօրգիւնիւնայի մարմինը Նիկօլաեվսկայա երկաթուղու կայարանից հանդիսաւոր կերպով տարվեց Պետրօպօլիսի մայր եկեղեցին: Պետրօպօլիսի տաճարում Մեծ Խլխանուհի Ալէքսանդրա Գեօրգիւնիւնայի գերեզմանը գտնվում է ի Տէր հանգուցեալ Թագաւորուհի Յետրովիչ Նիկօլայ Ալէքսանդրովիչի գերեզմանի մօտ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ				
Սեպտեմբերի 17-ին				
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	94 ռ.	50 կ.		
Բերլինի վրա 100 մարկ	46 >	35 >		
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 >	35 >		
Ռսկի	այժմէ	7 >	56 >	
Մաքսային կուպոններ	151 >	62 >		
Արծաթ	1 >	14 >		
Բորսային դիվիդենդներ	5 >	6 >		
Պետ. բանկի 5 1/2 տոմս 1 շրջանի	102 >			
— — — — —	2-րդ	102 >	37 >	
— — — — —	3-րդ			
— — — — —	4-րդ			
— — — — —	5-րդ			
— — — — —	6-րդ			
6 1/2 ոսկեայ ընտա	155 >	50 >		
4 1/2 ոսկեայ փոխառութիւն				
Արեւելեան 5 1/2 փոխառ. 1-ին շրջ.				
— — — — —	2-րդ	101 >	75 >	
— — — — —	3-րդ	103 >	73 >	
Ներքին 5 1/2 առաջին փոխառութիւն	237 >			
— — — — —	երկրորդ	221 >	75 >	
Պետական, երկաթուղային ընտա	103 >	87 >		
5 1/2 1/2 ընտա				
4 1/2 ներքին փոխառութիւն	96 >	12 >		
4 1/2 գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի	99 >	7 >		
Աղ. կալ. բանկի խաղաղութիւն				
գրաւ. թղթ.	101 >	37 >		
5 1/2 1/2 ընտա. գիւղ. հող. բանկի	105 >	75 >		
4 1/2 1/2 գրաւական թղթեր կայուած.				
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	145 >			
— — — — —	թղթալ.	100 >	87 >	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	101 >	37 >		
ընկերութեան օրվագրականներ.	100 >	50 >		
Մոսկվայի քաղաք. օրվագրականներ.	100 >	87 >		
0 ժէսայի				
Թիֆլիսի				
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.				
— — — — —	Գրաւ. Թիֆլիսի			
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է:				

Խմբագիր-հրատարակող

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ստացվել է և վաճառվում է «ԼՈՒՍԱԴԻՄԻՆ» գինը ճանապարհածախսով
1 ռուբլի 20 կ:

Ազո Մարուն	3 կոպ.
Փոքրիկ երեխայ	2 "
Գարկբալդի	10 "

Հայերեն-ռուսերեն բառարան, ճանապարհածախսով 2 ռուբլի:

Պահեստը պ. Տեր-Սարգսյանցի խանութում է: Կվորցովայա փողոցի վրա: Թիֆ-
լիսի գրավաճառները և դամարով առնողները ունենում են 15% գինում: օտարաբաղա-
ցիք—20%: ճանապարհածախսը դամարով գնողներին վրա է: 1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է
ի գիտություն, որ վեներիանա Ա. Գ. Մեքլեմանը, ձրի պատուառու է ծաղիկ հա-
սակառություններին և թէ մանուկներին ամենայն օր առաւօտեան ժամը 7-ից մինչև 10-ը
իր սեփական տանը, Ռեւոլուցիոնի և Ալեքսանդրովսկի փողոցների անկիւնում, 9 քաղաքա-
մասում: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գի-
տություն, որ նա ներկայ սեպտեմբերի 29-ին, կեսօրվայ 12 ժամին, կը
կայացնէ աճուրդ նախ կապարով տալու համար Ալեքսանդր փողոցի վրա, երկաթուղու
զծի ետևում, փոքրիկ տնակների (խուտորների) շարքում գտնվող 7 կտոր քաղաքային
գետին, ամեն մէկը 134-ից մինչև 182 քառակուսի սաժեն մեծութեամբ, երկրորդ վաճա-
ռելու համար նոյն տեղում գտնվող 3 կտոր քաղաքային գետին, մէկը 202, միւսը 171,6
և երրորդը 189,3 քառակուսի սաժեն մեծութեամբ:

Աճուրդը տեղի կունենայ տեղում: Մասնակցողները պէտք է ներկայացնեն իրանց
առաջարկած գնի կամ կապարավաճի 10% աճուրդի ժամանակ, իսկ առաջարկված գնի
կամ կապարավաճի մնացեալը առաջին կիսամեակի (կես տարվայ) համար պէտք է
վճարեն մի ամսվայ ընթացքում, սկսած այն օրից, երբ գնողները կամ կապարառուները
կը յայտնեն քաղաքային Կառմայի կողմից իրանց վրա աճուրդը հաստատվելու մասին:
1—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԵՐԱՆՔԻՆ է առնում թարգմանել հայերէն մատչելի պայմաններով,
Փրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից: Ունենալով քանի մի ազատ
ժամեր պատրաստ է զատաւանդել Փրանսերէնը և գերմաներէնը ցանկացողնե-
րին: Նախադասելի են առաւել նոր սկսողները:
Կիմել «Մշակ» խմբագրութեան: 4—10

ՀԱՍՏԱՐԱՎԱՅԻՆ ՈՐՇԱՐԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԱՆՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՈՉԱՐՁԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍԻՄ

Յարգելի հասարակութեան ուշադրութեանն եմ առաջարկում իմ ֆաբրի-
կայում ամենալաւ ֆրանսիական թղթից պատրաստող
ԳԻՋԱՆԵՐԸ առանց սօսինձի:

Այդ գիղաները պատրաստվում են իմ ֆաբրիկայում նորերս ստացված
ամենանոր սիւսեմի ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ:

Պաշարները գործածողները միշտ կարող են ունենալ այդ տեսակ գիղա-
ները ցանկ տեսակ ծրարների և ամեն գնների պայմաններ, որոնք արդէն
վաճառվում են ահագին քանակութեամբ:

Նոր է ստացված ամենալաւ յատկութեան և թարմ

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ծխախոտ:

Օտարաբաղաքայինների պատուէրները կատարվում են անմիջապէս և ճիշդ
կերպով: 2—10



Մ. Գ. ՅԷՅՏԼԻՆԻ


ԺԱՄԱՅՈՅՏՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ
ՕՊՏԻԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պաշարի այդու դիմաց, անկիւնի մագաղինում, ստացված է միւս ընտրութիւն՝ ոսկեայ, նոր
ոսկեայ, նիւնեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՆԵՏՆԵՐ,
ՊԷՆՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈ-
ԿԼԵՆԵՐ, ՋԵՐՄԱՍՏՈՒՄԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և
թէ վանանների համար վերաստուգված և վիպական ունեցող
ՄԱԿՍԻՄՍԿԻ ջերմաչափեր: Լորնետի և պէնսելի համար ոսկեայ,
արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մի-
տալական թելեր:

Ալիոցներ և պէնսելներ տրվում են նմանապէս բժշկների
պատուէրով:

Մագաղինում յանձն են առնում նմանապէս փայցած իրերի
նորոգելը և ապագիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:



25—50 (5)

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱՌԻ ԷՍԷՆՑԻԱ

Յայտնի իր արտակարգ ար-
ժանաւորութիւններով ԻՍԿԱԿԱՆ ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱՌԻ ԷՍԷՆՑԻԱ
մինչև այժմ մնում է ամենալաւը, ամենաօգտաւէտը և ամենահամովը և կը մնայ էլ ա-
պագայում:

Իսկ աչքի առաջ ունենալով նրա բազմաթիւ կեղծումներ, պէտք է ի նկատի ու-
նենալ առնողներին շահերին հակառակ նպատակներ և գնելով ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱՌԻ
ԷՍԷՆՑԻԱՆ զգուշանալ, այդ ԱՌՈՂՋ և ՀԱՄՈՎ նիւթի փոխարէն չը ստանալու փայտից
հանած, խիստ ջրախառն մի թղթ, որը լաւ քացախին ոչ յատուկ անախորժ համ
ունի:

Պահանջել ոչ թէ միայն ֆիրմայի էՏԻԿԷՏԸ արուակի վրա, Բ. ԿԵՕԼԵՐԻ ստորա-
գրութեամբ, բայց և անպատճառ ֆիրմայի ՊԼՍԲԱՍ, որը կախված է խցանի միջով
անցկացրած թելի վրա:

Ծախվում է զաւառներում ամենալաւ մագաղիններում:

2—5 (№ 1)

ПАРФЮМЕРИЯ
ВИКТОРИЯ РЕЖИНА
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНО
духи высшего достоинства
ИКСКОРНАКСЬ И ВИОЛЕТЬ
О-ДЕ-КОЛОНЬ ДВУХТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАХАРОВЪ
Въ Высочайше утвержденномъ Кавказ-
скомъ Товариществѣ торговли апте-
карскими товарами въ Тифлисѣ

ПАРФЮМЕРИЯ
ВИКТОРИЯ РЕЖИНА
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНО
духи высшего достоинства
ИКСКОРНАКСЬ И ВИОЛЕТЬ
О-ДЕ-КОЛОНЬ ДВУХТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАХАРОВЪ
Въ Высочайше утвержденномъ Кавказ-
скомъ Товариществѣ торговли апте-
карскими товарами въ Тифлисѣ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

1080 ԵՆ ՏԵՍԵԼ

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների համար հեռեւեալ դասագրքերը՝

1) Ս. Մալխասեանց Գրաբարի հոլով, խոնարհ. և նախդ.	25 կ
2) Ս. Մանդինեան՝ Հնչիւղի բացատր. ուսուցիչ. համար	30 >
3) Համառոտ մանկավարժութիւն	1. ր. 50 >
4) Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քր. հաւատոյ	60 >
5) Կոստանեան՝ Ծաղկաբաղ. չրջան Ա.	25 >
6) > Ծաղկաբաղ. չրջան Բ.	60 >
7) > Ծաղկաբաղ. չրջան Գ.	40 >
8) > Նախաշաղկ	25 >
9) Եղիշէ ըստ անձնացեաց օրինակի	80 >
10) Սիմէոնեան՝ աշխարհագրութիւն, մ. բնակ.	60 >
11) > մ. քաղաքական	60 >
12) Վարձէլեան՝ Դասադիրք թուարանութեան	70 >
13) Գ. Երզնկեանց՝ Թուար. խնդիրներ և օրինակներ տարրական դասընթացք ա. և բ. տարի	30 >
14) Տէր-Սարգսեան՝ Վալիւազ. դասաւանդ. եղանակը	20 >
15) Աղանեան՝ Կրօնի դասագիրք, երկրորդ տարի	25 >
16) > երրորդ տարի	25 >
17) Երզնկեան՝ Դասադիրք ճաշնագրութեան	60 >
18) Սիմէոնեանց Գ. Սրբազան պատմ. հ. կտակ.—գ.	50 >
19) Սահակեանց Ս. ք. Սրբազան պատմ. Հին-Ռ. խոր	40 >
20) Захаровъ, Сборн. примѣр. для писемъ. исчислен.	20 >
21) > в. П и III.	20 >
22) Мартыновскій, Русскіе писатели въ выборѣ и обработкѣ для школь. Томъ I	1 р. 25 >
23) > II	1 > 25 >
24) Вересовъ, Рисованіе по сѣтѣ для самостоятельн. занятій дѣтей въ школь и дома	20 >
25) Теръ-Давтянцъ, Русск. сл. Рук. для Арм. уч. Г. I и II	50 >
26) Теръ-Акопянцъ, Начальная книжка Русск. язык. для Армянскихъ учил. Годъ I, II и III	45 >
27) > Учеб. Русск. языка для Армян. училищъ	60 >

3—5 (2.)

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Քաղաքի կենտրոնում, Գյուրջինսկի
պրուսկական վրա: Գեղեցիկ և մաքուր
կահաւորված սենեակներ. օրը 60 կո-
պէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ
վիճում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ
проспектѣ. Изначно и чисто меблирован-
ные номера отъ 60 коп. до 5 руб.
въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

12—36

ԱՄԵՐԻԿԱՆԵՐԻՈՐ ՏԵՂԱԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող
իրաւաւորներ անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առեւտրական հաշւարարու-
թիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/-ից մինչև 120/-
վաճառվում է եղարց Ծովիանոյների բանկային գրասենեակում և հեղինակի մոտ:
Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաբաղաքայից դիմում են վերջին հասցեով՝ С. П. Ма-
нуэльянцу.

Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի:

12—150